ու ժողովուրդների միջև, նահանգապետը վստահեցրեց, որ Օրենբուրգի մարզում ապրող բոլոր ազգությունների ազգային ինքնության պահպանման համար ստեղծված են բարենպաստ պայմաններ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՏՐԻԿ ԴԵԻԵՋՅԱՆԻՆ

Մայիսի 20-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության տնտեսական զարգացման նախարար Պատրիկ Դեւեջյանին: Բարի գալուստ մաղթելով նախարարին՝ Նորին Սրբությունը նշեց. «Մեզ համար մեծապես ուրախալի է տեսնել մեր ժողովրդի հաջողյալ զավակց: Հպարտ ենք, որ մեր ազգի այն հատվածը, որ գաղթից հետո ապաստան գտավ Ֆրանսիայի հյուրընկալ հողում, կարողացավ հաղթահարել իր կորստի ցավն ու վերադառնալ խաղաղ ստեղծագործ աշխատանքի՝ իր նպաստը բերելով երկրի շինությանն ու բարգավաճմանը: Ֆրանսիայում եւ համայն աշխարհում բազում են մեր այն հայորդիները, ովքեր բարձր են պահում հայ լինելը իրենց բարի կենցաղով ու օրինապահ ընթացքով, կյանքի տարբեր ոլորտներում իրենց հաջողություններով եւ ունեցած ներդրումով: Նրանցից եք նաեւ Դուք, որ Ձեր անուրանալի վաստակն ունեք մեր երկու երկրների ու ժողովուրդների միջեւ բարի ու եղբայրական ջերմ հարաբերությունների ամրապնդման ու զարգացման մեջ: Մեր հայրական օրհնությունն ու մաղթանքներն ենք բերում:

Նախարար Դեւեջյանը, իր երախտագիտությունը հայտնելով Նորին Սրբությանը՝ նշեց, որ իր համար յուրաքանչյուր այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին յուրօրինակ վերադարձ է սեփական արմատներին, սեփական ակունքներին, ինչը յուրաքանչյուր մարդու համար շատ կարեւոր հանգամանք է ներկայիս կյանքի հարափոփոխ ընթացքի մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅԻՍԻ 28-Ը՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐ

Մայիսի 28-ին Հանրապետության օրվա առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը թեմական առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների ուղեկցությամբ այցելեց Սարդարապատի հուշահամալիր՝ հարգանքի փուրք մատուցելու հանուն Հայոց անկախ պետականության զոհված բազում հայորդիների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում Ամենայն Հայոց Հայրապետը եւ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ծաղկեպսակներ զետեղեցին, ապա ներկայությամբ ՀՀ Նախագահի եւ հայոց պետական ավագանու Նորին Սրբությունը կատարեց աղոթք Մայիսյան հերոսամարտերին զոհված հայորդիների հոգիների հանգստության համար:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ընթացքում եկեղեցականաց դասը եւ բարեպաշտ հավատացյալները աղոթք վերառաքեցին առ Բարձրյալն Ասված՝ աշխարհի խաղաղության եւ Հայոց պետականության ամրության ու անսասանության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ